

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերով վարչության և Ուկրաինայի սպորտի և երիտասարդության հարցերով նախարարության միջև սպորտի և ֆիզիկական կուլտուրայի բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերով վարչությունը և Ուկրաինայի սպորտի և երիտասարդության հարցերով նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով՝

երկու երկրների ժողովուրդների միջև սպորտային կապերի զարգացմամբ,

երկու երկրների բնակչության սպորտով զբաղվելու և առողջության ամրապնդման նպատակներով սպորտային սարքավորումների փոխօգտագործման համար պայմանների ստեղծմամբ,

հաստատելով իրենց նվիրվածությունը Օլիմպիական խարտիայի սկզբունքներին և նպատակներին,

ընդունեցին համագործակցության հետևյալ սկզբունքները.

### Հոդված 1

Կողմերը կնպաստեն սպորտի բնագավառում մասնագետների և ղեկավարների փոխադարձ հանդիպումների կազմակերպմանը՝ երկկողմ համագործակցության գծով խորհրդակցությունների անցկացման նպատակով:

Կողմերը սպորտային կապերի համաձայնեցման նպատակով կնպաստեն մարզական կազմակերպությունների և ֆեդերացիաների պատվիրակությունների, ղեկավարների փոխանակմանը, ինչպես նաև միջազգային մարզական և օլիմպիական շարժման հիմնախնդիրներին կապված փոխադարձ խորհրդակցությունների անցկացմանը:

Կողմերը կնպաստեն երկու երկրներում անցկացվող մրցումներին և միջազգային մարզական միջոցառումներին երկկողմանի մասնակցությամբ:

Կողմերը կնպաստեն տարբեր մարզաձևերով սպորտային թիմերի և ակումբների փոխանակմանը՝ մարզական հավաքների, համատեղ մարզումների, ընկերական և խաղային հանդիպումների անցկացման նպատակով:

Կողմերը կմասնակցեն երկու երկրներում անցկացվող գիտական սեմինարներին, որոնք վերաբերում են սպորտի հարցերին:

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կնպաստեն ցանկացած մարզաձևերից մարզիչների և մասնագետների փոխանակմանը:

## Հոդված 2

Կողմերը անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն սպորտի, սպորտային գիտության և բժշկության բնագավառում ինֆորմացիայի, ինչպես նաև բարձրակարգ մարզիկների և սպորտային փոխարինողների պատրաստման ուղղությամբ ձեռք բերած փորձի փոխանակման համար:

Կողմերը կնպաստեն երկու երկրների սպորտային ակումբների, սարքավորումների պատրաստման կենտրոնների, ֆիզիկական դաստիարակության համակարգի աշխատողների փոխանակմանը, մարզչական, մանկավարժական և սպասարկող անձնակազմի պատրաստմանը:

Կողմերը անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն գիտական աշխատությունների, ծրագրերի, ուսումնական մարզական գրքերի, ձեռնարկների, հրատարակությունների և ֆիլմերի փոխադարձ փոխանակումը, ինչպես նաև տարբեր մակարդակներով և բոլոր տարիքային խմբերում տարբեր սպորտաձևերի վերջին նվաճումների փոխանակումը, սպորտային կառույցների շինարարության և շահագործման, սպորտային գույքի և սարքավորումների, գիտական տեխնիկայի արտադրության բնագավառում տեղեկությունների փոխանակումն ապահովելու ուղղությամբ:

Կողմերը կնպաստեն իրենց բարձրագույն ուսումնական հաստատություններում տարբեր մարզաձևերի գծով մարզիչների, գիտամանկավարժական կադրերի դասախոսների պատրաստմանը և վերապատրաստմանը:

## Հոդված 3

Կողմերը անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն սպորտային համագգեստի, գույքի և սարքավորումների ձեռք բերման հարցում միմյանց կարիքները բավարարելու համար և կնպաստեն սպորտային ապրանքներ, գույք, սարքավորումներ արտադրող և թողարկող համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը և դրանց իրացմանը, կհամագործակցեն սպորտային շինությունների շինարարության և վերակառուցման գործում:

#### Հոդված 4

Կողմերը կարծիքներ և առաջարկություններ կփոխանակեն, ինչպես նաև կհամակարգեն իրենց գործունեությունը միջազգային օլիմպիական և մարզական շարժման հարցերում:

#### Հոդված 5

Կողմերը որոշեցին, որ սույն Համաձայնագրի հոդվածներում շարադրված՝ երկու պետությունների միջև մարզական համագործակցության ձևերը կիրականացվեն երկու պետությունների համար փոխընդունելի պայմաններով:

Երկիրը, որը գործուղում է մարզական պատվիրակություններին, թիմերին, մարզիչներին, գիտնականներին, մասնագետներին, առանձին մարզիկներին և այլ անձանց, վճարում է նրանց՝ մինչև ընդունող պետության մայրաքաղաքը և հետադարձի ճանապարհածախսը:

Ընդունող կողմը իր վրա է վերցնում ժամանման հետ կապված ծախսերը (տեղավորումը, պետության տարածքով մինչև մրցույթների վայր տեղափոխումը, անհրաժեշտ բժշկական սպասարկումը, սնունդը, անհրաժեշտության դեպքում՝ թարգմանիչների ծառայությունները):

Կողմերը պայմանավորվեցին, որ սպորտային թիմերի, մարզիկների, գիտնական-մասնագետների, առանձին մարզիկների և այլ անձանց գործուղումը և ժամանումը պետություն՝ ծրագրով նախատեսված օրերից ավելի լինելու դեպքում, պետք է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում համաձայնեցվեն երկու պետությունների համապատասխան ֆեդերացիաների և այլ սպորտային կազմակերպությունների միջև:

#### Հոդված 6

Սույն Համաձայնագիրը չի շոշափում պայմանավորվող Կողմերի պարտավորությունները երկրորդ երկրի նկատմամբ, չի բացառում մարզական համագործակցության այլ փոխադարձ ընդունելի ձևերը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում: Կողմերի համաձայնությամբ կարող են ձևակերպվել լրացուցիչ արձանագրություններ և համաձայնագրեր, որոնցում հստակեցվում են փոխհամագործակցության այլ ձևերը:

#### Հոդված 7

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և ուժի մեջ կմնա այնքան ժամանակ, մինչև Կողմերից մեկը վեց ամիս առաջ գրավոր կտեղեկացնի մյուս Կողմին սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում 1993 թվականի հոկտեմբերի 26-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ռուսերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Համաձայնագիրը ուժի մեջ է մտել 1993 թվականի հոկտեմբերի 26-ից: